

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ____ » _____ 2016թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ ____-Ա

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Վանաձոր համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 5-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. Օրակարգը հաստատելու մասին:
2. Վանաձոր համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին:
4. Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Վանաձոր համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի կազմը հաստատելու մասին:
6. Վանաձորի համայնքապետարանի շենքի ջեռուցումը կազմակերպելու համար ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին
7. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա.ՕՀԱՆՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ
ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ